



*Կալիֆորնիայի հաշմանդամների պահպանության և իրավունքների  
պաշտպանության համակարգ  
Անվճար հեռախոսահամար՝ (800) 776-5746*

## Բժշկական տվյալների ստացում և փոփոխում

---

*Ապրիլ 2016թ., Հր. #5112.10*

*Դուք ունեք իրավունք՝ դիտելու, պատճենելու կամ փոփոխելու Ձեր բժշկական տվյալները: Կալիֆորնիայի Առողջության և անվտանգության մասին օրենք, (H&SC) §123110(a): Դուք նաև ունեք իրավունք՝ Ձեր բժշկական տվյալները դիտելու համար Ձեզ հետ վերցնել որևէ մեկին: H&SC § 123110(a): Ձեր անձնական ներկայացուցիչը (ծնողը, օրինական ներկայացուցիչը, խնամակալը կամ բուժսպասարկման գծով գործակալը) ունի նույն իրավունքը, ինչը և Դուք՝ դիտելու, պատճենելու կամ փոփոխելու Ձեր բժշկական տվյալները (բացի այս հուշաթերթիկում ներկայացված դեպքերից): Այս հուշաթերթիկը նաև քննարկում է Ձեր իրավունքների որոշ սահամանափակումները:*

**Ո՞ր օրենքներն են ինձ թույլ տալիս դիտելու իմ բժշկական տվյալները, ստանալու դրանց պատճենները կամ փոփոխելու դրանք:**

*Թե՛ դաշնային օրենքը, թե՛ Կալիֆորնիայի օրենքը հիվանդներին թույլ են տալիս դիտելու իրենց բժշկական տվյալները, ստանալու դրանց պատճենները կամ դիմելու դրանցում փոփոխություններ կատարելու համար: Դաշնային չափանիշները ներառված են Բժշկական ապահովագրության տվյալների փոխանցման և հաշվետվողականության մասին օրենքի (Health Insurance Portability*

and Accountability Act - HIPAA) տվյալների գաղտնիությունը կարգավորող դրույթներում: Նահանգային չափանիշները ներառված են Բժշկական տվյալներն օգտագործելու հիվանդի իրավունքի մասին Կալիֆորնիայի օրենքում և Կալիֆորնիայի Առողջության և անվտանգության մասին օրենքի 123100 և հաջորդող բաժիններում: Թե՛ դաշնային, թե՛ Կալիֆորնիայի օրենքները նախատեսված են պաշտպանելու Ձեր իրավունքները, սակայն չափանիշներն ունեն թեթևակի տարբերություններ: Դաշնային չափանիշները գործում են այն չափով, եթե նահանգային չափանիշները Ձեզ չեն տալիս ավելի շատ իրավունքներ: 45 C.F.R. §§ 160.203(b), 160.202 ("առավել խստության" սահմանում, ենթակետ (2)): Սա նշանակում է, որ որոշ դեպքերում գործում են դաշնային չափանիշները, որոշ դեպքերում՝ նահանգային չափանիշները: Այս հուշաթերթիկը բացատրում է, թե երբ են գործում դաշնային չափանիշները և երբ՝ նահանգային չափանիշները:

Մեծ մասամբ Կալիֆորնիայի օրենքը, ի տարբերություն դաշնային կանոնակարգերի, տալիս է բժշկական տվյալներն օգտագործելու կամ դրանք փոփոխելու ավելի մեծ իրավունքներ: Այդ պատճառով Կալիֆորնիայի օրենքն ընդհանուր առմամբ սահմանում է հիվանդի բժշկական տվյալներն օգտագործելու և դրանք փոփոխելու բոլոր իրավունքները: Այդուհանդերձ, կա չորս իրավիճակ, որոնց համար դաշնային HIPAA օրենքը տալիս է բժշկական տվյալների օգտագործման ու փոփոխման ավելի մեծ իրավունքներ, քան Կալիֆորնիայի օրենքը: Դաշնային կանոնակարգերը տալիս են ավելի մեծ իրավունքներ հետևյալ չորս իրավիճակների համար.

- a) Հոգեկան առողջության տվյալների օգտագործում (բացի հոգեթերապևտիկ գրառումներից):

- b) Բժշկական տվյալների ամփոփ քաղվածքների կազմում բուժսպասարկող հաստատությունների կողմից տվյալների օգտագործումը թույլ տալու փոխարեն:
- c) Բժշկական տվյալների փոփոխում:
- d) Ռենտգեն հետազոտության կամ ԷՄԳ-ի, ԷԷԳ-ի կամ ԷՄԳ-ի գրանցած տվյալների օգտագործում:

Այս հուշաթերթիկի մնացած մասը նկարագրում է, թե որ չափանիշներն են թույլ տալիս Ձեզ տեսնելու, պատճենելու կամ փոփոխելու Ձեր բժշկական տվյալները: Հուշաթերթիկում մեկնաբանվում է նաև, թե որտեղ կարելի է գտնել համապատասխան չափանիշները՝ դաշնային HIPAA օրենքի տվյալների գաղտնիությունը կանոնակարգող դրույթներում, թե Կարլիֆորնիայի Առողջության և անվտանգության օրենքում:

### **Ի՞նչպես կարող եմ օգտագործել իմ տվյալները:**

Դուք կամ Ձեր լիազոր ներկայացուցիչը պետք է ներկայացնեք գրավոր դիմում՝ Ձեր տվյալները տեսնելու և/կամ դրանց պատճեն ստանալու համար: H&SC §123110(a), (b): Պատճենները ստանալու դիմումում պետք է նշվեն այն տվյալները, որոնց պատճեններն անհրաժեշտ են: H&SC §123110(b):

### **Կա՞ ժամկետային սահմանափակում բժշկական տվյալները տեսնելու և/կամ դրանց պատճեններն ստանալու դիմումի կատարման համար:**

Այո: Բուժսպասարկող հաստատությունը պետք է թույլ տա օգտվել բժշկական տվյալներից սովորական աշխատանքային ժամերին՝ գրավոր դիմումն ստանալուց հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում: H&SC §123110(a): Եթե Դուք կամ Ձեր լիազոր ներկայացուցիչը դիմում եք հարցաթերթիկի բոլոր տվյալների կամ մի

մասի պատճենների համար, բուժապասարկողը պետք է պատճենները փոխանցի գրավոր դիմումը ներկայացնելուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում: H&SC §123110(b):

**Գործու՞մ է որևէ սահմանափակում հոգևկան առողջության տվյալներն օգտագործելու հիվանդի իրավունքի նկատմամբ:**

Այո: Եվ՝ HIPAA-ն, և՛ Կալիֆորնիայի օրենքը որոշ չափով սահմանափակում են հոգևոր առողջության տվյալների օգտագործումը: Առանձին սահմանափակումները կախված են այն բանից, արդյոք գրառումները հոգեթերապևտիկ բնույթի են, թե ոչ: Հոգեթերապևտիկ գրառումները հոգեբույժի կողմից անհատական կամ խմբային խորհրդատվության, համատեղ կամ ընտանեկան խորհրդատվության սեանսների ընթացքում արված գրառումներն են և որոնք առանձնացված են Ձեր մնացած բժշկական տվյալներից: 45 C.F.R. § 164.501:

**Որո՞նք են հոգևոր առողջության տվյալների օգտագործման համար գործող սահմանափակումները (հոգեթերապևտիկ գրառումներից տարբերվող տվյալներ):**

HIPAA օրենքի տվյալների գաղտնիության դրույթները թույլ են տալիս բուժապասարկողին մերժել հոգևկան առողջության մասին տվյալների օգտագործումը (բացի հեղթերապևտիկ գրառումներից) միայն հետևյալ պայմաններում.

- a) Լիցենզավորված բուժապասարկողը, դատելով մասնագիտորեն, որոշել է, որ տվյալների օգտագործումն ամենայն հավանականությամբ կարող է վտանգի տակ դնել Ձեր կամ մեկ այլ անձի կյանքը կամ ֆիզիկական ամբողջությունը:
- b) Տվյալը վերաբերում է մեկ այլ անձի (եթե այդ անձը բուժապասարկող հաստատություն չէ), և լիցենզավորված

բուժսպասարկողը, դատելով մասնագիտորեն, որոշել է, որ տվյալների օգտագործումն ամենայն հավանականությամբ կարող է էական վնաս հասցնել այդ այլ անձին:

- c) Տվյալների օգտագործման դիմումը ներկայացվել է Ձեր անձնական ներկայացուցչի (օր. ծնողի, օրինական ներկայացուցչի, խնամակալի կամ բուժսպասարկման գծով գործակալի) կողմից, լիցենզավորված բուժսպասարկողը, դատելով մասնագիտորեն, որոշել է, որ Ձեր անձնական ներկայացուցչին տվյալների օգտագործման իրավունքի տրամադրումն ամենայն հավանականությամբ կարող է էական վնաս հասցնել Ձեզ կամ մեկ այլ անձի:

HIPAA օրենքի դրույթներով հիվանդին կարելի է մերժել օգտագործել տվյալները միայն այն դեպքում, եթե տվյալների օգտագործումն ամենայն հավանականությամբ վտանգի տակ կարող է դնել որևէ մեկի կյանքը կամ ֆիզիկական ամբողջությունը: Այս չափանիշը բուժսպասարկողի համար դժվար է բավարարել: Մյուս կողմից, հիվանդի ներկայացուցչին (օր. ծնողին, օրինական ներկայացուցչին, խնամակալին կամ բուժսպասարկման գծով գործակալին) կմերժվի օգտագործել տվյալները, եթե տվյալների օգտագործումը կարող է էական վնաս հասցնել որևէ մեկին: Դա նշանակում է, որ հիվանդի ներկայացուցչի համար ավելի դժվար է օգտագործել հիվանդի տվյալները, քան հիվանդի համար իր սեփական տվյալներն օգտագործելը:

ՆՇՈՒՄ. Տվյալների օգտագործման այս սահմանափակումները գործում են միայն այն հիվանդի կամ հիվանդի ներկայացուցչի համար, ովքեր չեն ստացել տեղեկատվությունը փոխանցելու թույլտվություն: Տեղեկատվության տրամադրման նման սահմանափակումներ չկան հիվանդից բացի մեկ այլ անձի համար, եթե հիվանդը տվել է վավեր գրավոր թույլտվություն:

**Ի՞նչ իրավունքներ ունի հիվանդը, եթե բուժապասարկողը հրաժարվում է թույլ տալ հոգական առողջության տվյալների օգտագործումը (ոչ հոգեթերապևտիկ գրառումներ):**

HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթներով, եթե բուժապասարկողը հրաժարվում է թույլ տալ տվյալների օգտագործումը, բուժապասարկողը պետք է տրամադրի գրավոր մերժում: Գրավոր մերժումը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

- a) մերժման հիմքը,
- b) բուժապասարկողի նշանակած լիցենզավորված մասնագետի կողմից տվյալները դիտելու իրավունքը (ներառյալ նկարագրություն, թե ինչպես կիրառել տվյալները դիտելու իրավունքը),
- c) բուժապասարկողին դիմում-բողոք ներակայացնելու իրավունքը և Առողջության հարցերով զբաղվող վարչությանը և Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար սոցալ ծառայությունների գրասենյակին դիմում-բողոք ներակայացնելու իրավունքը,

Նշում. HIPAA օրենքին ենթարկվող բուժապասարկողների համար տվյալների օգտագործման մերժման և ծանուցման նույն դաշնային պահանջները գործում են ռենտգեն հետազոտության և ԷՄԳ, ԷԷԳ և ԷՄԳ գրանցումների օգտագործումը մերժելու համար: Դա այդպես է, քանի որ HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթներն ավելի մեծ չափով են թույլ տալիս օգտագործել այդ տվյալները, քան Կալիֆորնիայի օրենքները:

**Որո՞նք են հիվանդի կողմից իր հոգեթերապևտիկ գրառումներն օգտագործելու իրավունքի սահմանափակումները  
Կալիֆորնիայի օրենքի համաձայն:**

Կալիֆորնիայի օրենքը գործում է հիվանդի տվյալների օգտագործման համար, եթե բուժսպասարկողը չի ենթարկվում HIPAA օրենքին: Բացի այդ, Կալիֆորնիայի օրենքը գործում է հոգեթերապևտիկ գրառումների բացահայտման բոլոր դեպքերի համար: Դա այդպես է, քանի որ դաշնային կանոնակարգերով հոգեթերապևտիկ գրառումների օգտագործում ընդհանրապես չի պահանջվում: Այդ պատճառով էլ Կալիֆորնիայի օրենքը տալիս է տվյալների օգտագործման ավելի մեծ իրավունքներ, քան դաշնային կանոնակարգերը ("Հոգեթերապևտիկ գրառումներ" նեղ սահմանմամբ պետք է հասկանալ հոգեկան առողջության մասնագետի կողմից անհատական, խմբային, համատեղ կամ ընտանեկան խորհրդատվության սեանսի ընթացքում կատարված նշումները, որոնք առանձնացված են Ձեր մնացած բժշկական տվյալներից):

Կալիֆորնիայի օրենքով բուժսպասարկողը կարող է մերժել դիտելու թույլտվության կամ հոգեթերապևտիկ գրառումների պատճենների տրամադրումը հիվանդին, եթե բուժսպասարկողը որոշում է, որ հիվանդի համար նմանատիպ հոգեթերապևտիկ գրառումները տեսնելը կամ ստանալը պարունակում է "բացասական կամ կործանարար զգալի հետևանքների էական վտանգ": H&SC §123115(b): Այդուհանդերձ, նմանատիպ մերժումը ենթակա է հետևյալ չորս պայմաններին.

- a) բուժսպասարկողը տվյալներում պետք է մուտքագրի տվյալների ուսումնասիրման թույլտվությունը կամ պատճենների տրամադրումը մերժելու գրավոր բացատրություն, ներառելով հիվանդին սպառնացող բացասական կամ կործանարար

## Էջ 8՝ 17-ից

առանձնահատուկ հետևանքների նկարագրությունը, որոնք ըստ բուժսպասարկողի կարող են պատահել, եթե թույլ տրվի տվյալների դիտումը կամ պատճենումը,

- b) բուժսպասարկողը պետք է թույլ տա հոգեկան առողջության տվյալների դիտումը կամ պատճենների տրամադրումը հիվանդի կողմից նշանակված որևէ լիցենզավորված բժշկի և վիրաբույժի, լիցենզավորված հոգեբանի կամ լիցենզավորված կլինիկական սոցաշխատակցի,
- c) բուժսպասարկողը պետք է տեղեկացնի հիվանդին և՛ բուժսպասարկողի կողմից պահանջված տվյալների օգտագործման թույլտվության մերժման, և՛ տվյալները դիտելու և ստանալու հիվանդի իրավունքի մասին, և
- d) բուժսպասարկողը պետք է գրանցի, արդյոք հիվանդը պահանջել է, որ մեկ այլ բուժաշխատող դիտի կամ ստանա պահանջված տվյալները:

H&SC §123115(b)(1)-(4):

**Կա՞ որևէ սահմանափակում իմ տվյալներում զետեղված տեղեկատվության օգտագործման համար, եթե այն տրամադրվել է մեկ ուրիշի, ով բուժաշխատող չէ:**

Կալիֆորնիայի օրենքը սահմանում է, որ բուժսպասարկողը չպետք է թույլ տա բուժսպասարկողին "գաղտնիության" սկզբունքով տրված տեղեկատվության օգտագործումը մեկ ուրիշի կողմից, ով մեկ այլ բուժսպասարկող չէ կամ հիվանդը չէ: Դաշնային HIPAA օրենքի տվյալների գաղտնիության դրույթները սահմանում են, որ այդ տեղեկատվությունը կարող է միայն պահվել, եթե բացահայտումն "ամենայն հավանականությամբ կբացահայտի տեղեկատվության աղբյուրը": 164.524(a)(2)(v):

**Գործու՞մ է որևէ սահմանափակում ծնողի իրավունքի համար՝  
օգտագործել իր անչափահաս երեխայի բժշկական տվյալները:**

Այո: Ծնողն իրավունք չունի դիտել անչափահաս հիվանդի տվյալները կամ ստանալ դրանց պատճենները, եթե անչափահաս հիվանդին օրենքով թույլ է տրվում համաձայնել բուժմանը: H&SC §123115(a)(1): Տե՛ս նաև Ընտանեկան օրենսգրքի §§6920-6929: Բացի այդ, ծնողն իրավունք չունի օգտագործել անչափահաս հիվանդի տվյալները, եթե բուժսպասարկողը որոշում է, որ ծնողի կողմից պահանջված տվյալների օգտագործումը կործանարար ազդեցություն կունենա անչափահաս հիվանդի հետ բուժսպասարկողի պրոֆեսիոնալ հարաբերությունների կամ անչափահասի ֆիզիկական անվտանգության կամ հոգեբանական բարեկեցիկ վիճակի վրա: H&SC §123115(a)(2): Տվյալների օգտագործման այս սահմանափակումը հատկապես թույլ է տրվում դաշնային HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթներով: 45 C.F.R. § 164.502(g)(3)(ii)(B).

**Բուժսպասարկողը կարո՞ղ է իր հայեցողությամբ տրամադրել  
հիվանդի բժշկական տվյալների ամփոփ քաղվածք դրանք  
անմիջականորեն օգտագործելու թույլտվություն տալու  
փոխարեն:**

Դաշնային HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթները թույլ են տալիս բուժսպասարկողին պատրաստել ամփոփ քաղվածք տվյալների օգտագործման թույլտվություն տալու փոխարեն, սակայն միայն այն դեպքում, եթե Դուք ի սկզբանե համաձայն եք ստանալ ն՛ ամփոփ քաղվածքը, ն՛ վճարել դրա պատրաստման հետ կապված ցանկացած վճար: 45 C.F.R. § 164.524(c)(2)(iii)

Եթե բուժսպասարկողը պատրաստում է տվյալների ամփոփ քաղվածք դրանց օգտագործումը թույլ տալու փոխարեն, ապա պետք է

ամփոփվեն հիվանդի մասին բոլոր տվյալները, եթե հիվանդը չի սահմանափակում իր պահանջը որոշակի վնասվածքների, հիվանդությունների կամ դեպքերի վերաբերյալ տվյալներով: H&SC §123130(a): Բուժսպասարկողը կարող է քննարկել հիվանդի հետ, պարզելու, թե ինչ տեղեկատվություն է անհրաժեշտ: Եթե արդյունքում հիվանդը պահանջում է տեղեկատվություն որոշակի վնասվածքների, հիվանդությունների կամ դեպքերի վերաբերյալ, բուժսպասարկողը պետք է ամփոփ ձևով հավաքի միայն հիվանդի կողմից նշված վնասվածքները, հիվանդությունները կամ դեպքերը:

Ամփոփ քաղվածքը պետք է պարունակի յուրաքանչյուր վնասվածքի, հիվանդության կամ դեպքի մասին անկետայում ներառված ողջ տեղեկատվությունը հետևյալի վերաբերյալ.

1. հիմնական բողոք(ներ)ը, ներառյալ առնչվող պատմությունը,
2. տվյալներ խորհրդատվություններից և այլ բուժսպասարկողներին ուղղված ուղեգրերի վերաբերյալ,
3. ախտորոշումը, եթե սահմանված է,
4. բուժման ծրագիրը և ռեժիմը՝ ներառյալ նշանակված դեղամիջոցները,
5. բուժման ընթացքը,
6. կանխատեսումները՝ ներառյալ շարունակվող էական խնդիրները կամ վիճակները,
7. աշտորոշիչ բուժգործողություններին և հետազոտություններին առնչվող եզրակացություններ և դուրս գրման բոլոր էպիկրիզները, և
8. ամենավերջին ֆիզիկական զննման օբյեկտիվ տվյալները, այդ թվում՝ արյան ճնշում, քաշ և սովորական լաբորատոր ստուգումների թարմ տվյալներ:

H&SC §123130(b)(1)-(8)

**Կարո՞ղ է բուժսպասարկողը պահել տվյալները չվճարված հաշիվների պատճառով:**

Ոչ: Բուժսպասարկողը չի կարող պահել հիվանդի տվյալները ծառայությունների դիմաց չվճարված հաշիվների պատճառով: Բուժսպասարկողը, ով չվճարված հաշիվների պատճառով միտումնավոր կերպով կպահի տվյալները, ենթակա է պատասխանատվության օրենքով: H&SC §123110(j):

**Կարո՞ղ է բուժսպասարկողը գումար պահանջել տվյալները պատճենելու կամ ամփոփ քաղվածք պատրաստելու համար նախքան տվյալները կամ ամփոփ քաղվածքը տրամադրելը:**

Այո: Նախքան տվյալների պատճենները պահանջողին տրամադրելը բուժսպասարկողը կարող է պահանջել վճարել պատճենահանման ծախսերը, որոնք չեն գերազանցում քսանհինգ (25) ցենտը մեկ էջի համար կամ հիսուն (50) ցենտը մեկ էջի համար այն տվյալների դեպքում, որոնց պատճենումը կատարվել է միկրոժապավենից, և ցանկացած այլ ողջամիտ գրասենյակային ծախս, որը պահանջվել է տվյալները պատրաստելու համար: H&SC §123110(b):

Բացի այդ, բուժսպասարկողը կարող է պահանջել "ողջամիտ գումար" հիվանդի կողմից իր բժշկական տվյալներն օգտագործելու համար տրված դիմումի համաձայն տվյալների ամփոփ քաղվածքի պատրաստման վրա ծախսած ժամանակին ու գումարին համապատասխան: H&SC §123130(f):

Այդուհանդերձ, բուժսպասարկողը չի կարող գումար գանձել տվյալների այն պատճենների համար, որոնք անհրաժեշտ են Աշխատունակության կորստի դեպքում սոցիալական ապահովագրության ծրագրի (Social Security Disability Insurance - SSDI), Լրացուցիչ սոցիալական նպաստի ծրագրի (Supplemental Security

Income - SSI) կամ Medi-Cal-ի օգուտներից օգտվելու հայտ ներկայացնելու համար, եթե տվյալների տրամադրման դիմումը և հայտի հիմնավորումը բուժսպասարկողին են ներկայացվում գրավոր կերպով: H&SC §123110(d)(1): Տվյալները պետք է տրամադրվեն գրավոր դիմումի ներկայացումից հետո 30 օրվա ընթացքում: H&SC §123110(f): Տվյալների համապատասխան մասի միայն մեկ կրկնօրինակն է տրամադրվում անվճար: H&SC §123110 (d)(2): "Համապատասխան" տվյալներն այն տվյալներն են, որոնք սկսվում են օգուտների համար ներկայացված նախնական հայտի ամսաթվից և ավարտվում են այն ժամանակ, երբ կայացվում է վերջնական որոշում ցանկացած հայտի վերաբերյալ: H&SC §123110(d)(1): Բուժսպասարկողը չպետք է տրամադրի տվյալներն անվճար, եթե հիվանդին ներկայացնում է անհատ լիազոր ներկայացուցիչը: H&SC §123110(d)(3): Եթե հայտը բավարարվում է, բուժսպասարկողը տվյալների տրամադրման համար կարող է հիվանդից գանձել գումար վերը նշված գներին համապատասխան: H&SC §123110(e):

### **Ի՞նչպես կարող եմ փոփոխել իմ բժշկական տվյալները:**

HIPAA-ին ենթարկվող բուժսպասարկողների համար բժշկական տվյալների փոփոխումը գրեթե ամբողջությամբ ղեկավարվում է HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթներով: Համաձայն այդ դրույթների Դուք պետք է խնդրեք բուժսպասարկողին փոփոխել Ձեր տվյալները: 45 C.F.R. § 164.526(b)(1): Բուժսպասարկողը կարող է պահանջել, որ Ձեր դիմումը լինի գրավոր և պարունակի պահանջվող փոփոխության հիմնավորումը, սակայն բուժսպասարկողը պետք է տեղեկացնի Ձեզ այս պահանջների մասին նախքան Ձեր դիմումի ներկայացումը: 45 C.F.R. § 164.526(b)(1): Տվյալների փոփոխություն պահանջելու համար ժամանակային սահմանափակում չկա: 45 C.F.R. § 164.526(a)(1): Փոփոխություններ կարող եք պահանջել այնքան

ժամանակ, որքան Ձեր տվյալները գոյություն ունենան: 45 C.F.R. § 164.526(a)(1):

Բուժապասարկողը պետք է աշխատի Ձեր դիմումի վրա 60 օրվա ընթացքում: 45 C.F.R. § 164.526(b)(2)(i): Բուժապասարկողը կարող է այդ ժամկետը երկարացնել 30 օրով, եթե Ձեզ գրավոր տեղեկացնի այդ հետաձգման պաճառների մասին և նշի աշխատանքների ավարտման ամսաթիվը: 45 C.F.R. § 164.526(b)(2)(ii):

Եթե բուժապասարկողը համաձայնում է փոփոխել Ձեր տվյալները, նա պետք է առնվազն առանձնացնի փոփոխման ենթակա տվյալը և կամ կցի փոփոխությունը, կամ տրամադրի փոփոխության հղումը: 45 C.F.R. § 164.526(c)(1): Բուժապասարկողը պետք է նաև տեղեկացնի Ձեզ այն մասին, որ փոփոխությունը կատարվել է, և ստանա Ձեր համաձայնությունը՝ տեղեկացնելու ուրիշներին, ովքեր ստացել են փոփոխման ենթակա տվյալները: 45 C.F.R. § 164.526(c)(2):

Բուժապասարկողը պետք է փոփոխությունը տրամադրի այն մարդկանց, ում Դուք տեղեկացրել եք, որ բուժապասարկողը ստացել է փոփոխման ենթակա տվյալները, և այն մարդկանց, ովքեր բուժապասարկողի իմացությամբ ունեն տեղեկատվությունը և ովքեր կարող են հիմնվել Ձեզ հասցվող վնասի վերաբերյալ տեղեկատվության վրա: 45 C.F.R. § 164.526(c)(3): Փոփոխությունն ստացող բուժապասարկողները պետք է նաև փոփոխեն բուժապասարկողի տրամադրության տակ գտնվող տվյալները: 45 C.F.R. § 164.526(e):

Բուժապասարկողը կարող է մերժել փոփոխության Ձեր դիմումը, եթե կարծում է, որ տվյալը ճիշտ է և ամբողջական: 45 C.F.R. § 164.526(a)(2)(iv): Բուժապասարկողը կարող է մերժել փոփոխության Ձեր դիմումը նաև այն դեպքում, եթե բուժապասարկողը ինքը չի ստեղծել փոփոխման ենթակա տվյալը (բացի այն դեպքից, եթե տվյալը ստեղծողն այլևս չի կարող աշխատել փոփոխության դիմումի վրա),

կամ բուժապասարկողը չունի փոփոխման ենթակա տվյալը կամ իրավունք չունի օգտվելու այդ տվյալից: 45 C.F.R. § 164.526(a)(2):

Եթե բուժապասարկողը մերժում է փոփոխության Ձեր դիմումը, բուժապասարկողը պետք է մերժումը Ձեզ տրամադրի գրավոր: 45 C.F.R. § 164.526(d)(1): Գրավոր մերժումը պետք է պարունակի հետևյալը.

- a) Մերժման հիմքը (օր. բուժապասարկողը կարծում է, որ տվյալները ճիշտ են և ամբողջական),
- b) Ծանուցում, որ Դուք իրավունք ունեք ներկայացնել մերժման հետ չհամաձայնվելու տեղեկանք և ինչպես ներկայացնել այդ տեղեկանքը,
- c) Ծանուցում, որ եթե Դուք չներկայացնեք մերժման հետ համաձայն չլինելու տեղեկանք, կարող եք բուժապասարկողից պահանջել տվյալների հետագա բացահայտումների հետ միասին ներկայացնել փոփոխության համար Ձեր դիմումը և բուժապասարկողի մերժումը,
- d) Նկարագրություն, թե ինչպես կարող եք ներկայացնել բողոք բուժապասարկողին կամ Առողջության հարցերով զբաղվող վարչությանը և Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար սոցալ ծառայությունների գրասենյակին (Department of Health and Human Services Office for Civil Rights - OCR):

45 C.F.R. § 164.526(d)(1):

Բուժապասարկողը կարող է անհամաձայնության տեղեկանքի ծավալը "ողջամիտ կերպով սահմանափակել", սակայն պետք է թույլ տա Ձեզ գրել մինչև 250 բառ: 45 C.F.R. § 164.526(d)(2), H&SC 123111(a): (HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթները նվազագույն ծավալ չեն սահմանում, սակայն H&SC 123111(a) դրույթը թույլ է տալիս Ձեզ գրել մինչև 250 բառ): Բուժապասարկողը կարող է պատրաստել Ձեր անհամաձայնության տեղեկանքի դեմ գրավոր

ընդդիմախոսություն՝ տրամադրելով Ձեզ դրա կրկնօրինակը: 45 C.F.R. § 164.526(d)(3): Եթե բուժսպասարկողը բացահայտում է Ձեր բժշկական տվյալները, նա պետք է այդ բացահայտման մեջ ներառի անհամաձայնության Ձեր տեղեկանքը: H&SC § 123111(b): (Համեմատե՛ք HIPAA օրենքի տվյալների գաղտնիության մասին այն դրույթները, որոնք բուժսպասարկողին տալիս են փոփոխության փաստաթղթերի համար տվյալների ամփոփ քաղվածքը բացահայտելու հնարավորություն: 45 C.F.R. § 164.526(d)(5)):

Բացի այդ, չնայած HIPAA-ի պահանջներին, Կալիֆորնիայի օրենքը թույլ է տալիս Ձեր բուժսպասարկողին տրամադրել գրավոր հավելված Ձեր տվյալների ցանկացած այն հատվածի կամ տեղեկանքի վերաբերյալ, որոնք Ձեր կարծիքով ամբողջական չեն կամ ճիշտ չեն: Հավելվածը պետք է պարունակի առավելագույնը 250 բառից բաղկացած տեքստ Ձեր բժշկական տվյալների յուրաքանչյուր ոչ ամբողջական կամ ոչ ճիշտ փոփոխման ենթակա հատվածի մասին և պետք է գրավոր կերպով հստակորեն նշի, որ Դուք ցանկանում եք, որ հավելվածը կազմի Ձեր տվյալների մասը: H&SC § 123111(b):

### **Ի՞նչ կարող է անել հիվանդը կամ հիվանդի ներկայացուցիչը, եթե նրան մերժել են օգտագործել հիվանդի տվյալները:**

Դուք կարող եք ներկայացնել բողոք բուժձառայությունները տրամադրողին: Բուժսպասարկողը պետք է կատարի բողոքարկման գործընթացը HIPAA օրենքի համաձայն: 45 C.F.R. 164.530(d):

HIPAA դաշնային օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթների խախտումները, որոնք կատարվել են դրույթները 2003թ. ապրիլի 14-ին ուժի մեջ մտնելուց հետո, կարող են բողոքարկվել Առողջության հարցերով զբաղվող վարչությունում և Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար սոցապ ծառայությունների գրասենյակում (OCR): 45 C.F.R. § 160.306(a): Առողջության հարցերով

Էջ 16` 17-ից

գրադվող վարչության և Քաղաքացիական իրավունքների պաշտպանության համար սոցալ ծառայությունների գրասենյակի հասցեն է` 90 7th Street, Suite 4-100, San Francisco, California 94103, հեռախոսահամար (415) 437-8310: ՖԱՔՍ` (415) 437-8329: TDD` (415) 437-8311:

OCR-ը կարող է Ձեզ տրամադրել բողոքի ներկայացման ձևաթուղթ: Բողոքի ձևաթուղթը կարելի է գտնել նաև համացանցում <http://www.hhs.gov/ocr/privacyhowtofile.htm> հասցեով, բողոքի ձևաթղթի վերաբերյալ օգնություն կամ հարցերի պատասխանները կարող եք ստանալ` զանգահարելով (800) 368-1019: Բողոքները պետք է ներկայացվեն գրավոր խախտման մասին տեղեկանալուց կամ տեղեկացած լինելու ամսաթվից հետո 180 օրվա ընթացքում: 45 C.F.R. §§ 160.306(a), 160.306(b)(3): Բողոքում պետք է նշված լինի այն բուժսպասարկողի անունը, ով հանդիսանում է բողոքի առարկան, և նկարագրի այն գործողությունները կամ անգործությունը, որոնք խախտում են դրույթները: 45 C.F.R. § 160.306(b)(2): Լրացուցիչ տեղեկատվություն HIPAA-ի մասին կարող եք գտնել այստեղ` <http://www.hhs.gov/ocr/hipaa/>:

Բուժսպասարկողը կարող է չձեռնարկել պատասխան միջոցառումներ HIPAA օրենքով սահմանված Ձեր իրավունքները կիրառելու դեմ: 45 C.F.R. 164.530(g):

Բուժսպասարկողը, ով միտումնավոր խախտում է Կալիֆորնիայի Առողջության և անվտանգության մասին օրենքի պահանջները, կարող է ենթարկվել տույժերի, այդ թվում, սակայն չսահմանափակվելով 100 ԱՄՆ դոլարի տույժով և լիցենզիայի կասեցմամբ կամ չեղարկմամբ: H&SC §§123110(i) and (j): Բացի այդ, հիվանդը կամ հիվանդի ներկայացուցիչը կարող են դիմել դատարան տվյալները օգտագործելու համար: H&SC § 123120: Շահող կողմը վճարում է

Էջ 17` 17-ից

ծախսերը և փաստաբանական ծառայությունների ողջամիտ վճարները:

Դուք կարող եք նաև դիմել դատարան առկա վնասների համար, եթե լիցենզավորված բուժսպասարկողը, ով լուծարվել է, դադարեցրել է Ձեր տվյալների վարումը: H&SC § 123145(b): (Լուծարված բուժսպասարկողները պետք է պահպանեն տվյալները նվազագույնը 7 տարով և առնվազն մինչև անհատը դառնա 19 տարեկան: H&SC § 123145(a)): Կալիֆորնիայի օրենքի և HIPAA դաշնային օրենքի տվյալների գաղտնիության մասին դրույթները պետք է նաև հիմք հանդիսանան ներկայացնելու հայց բուժսպասարկողի դեմ անուշադրության հետևանքով գումարային վնաս հասցնելու համար, քանի որ օրենքը և դրույթները սահմանում են բուժսպասարկողի կողմից շահերը պաշտպանելու պատասխատավություն:

[Մենք ցանկանում եք լսել Ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում:](https://docs.google.com/forms/d/1d6ezTl2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1)  
<https://docs.google.com/forms/d/1d6ezTl2M5UMAWU66exLbc1SQ9wDPzvtuS3AGR4-cgwE/viewform?c=0&w=1>

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքներով զբաղվող կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս*  
[http://www.disabilityrightsca.org/ Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):